http://www.yerkir.am/arm/index.php?sub=newspaper_arm&exp=policy&month=01&year=2006&number=13&id=6480

*«Երկիր», 13 հունվարի 2006 թ., #1 (1871)*

# Սևրի պայմանագրի չիրագործման հետևանքները Մերձավոր Արևելքի և միջազգային քաղաքականության համար

*Սույն զեկուցումը ներկայացվել է Սևրի հաշտության պայմանագրի կնքման 85-ամյակին նվիրված, «Սուրմալու-Իգդիր» հայրենակցական միության կազմակերպած գիտաժողովին 2005 թ. դեկտեմբերի 21-ին: Տպագրվում է կրճատումներով:*

Սևրի պայմանագիրը գնահատելիս պարտադիր է ճիշտ պատասխանել մի առանցքային հարցի. արդյոք այդ պայմանագրի կնքումն ու բովանդակությունն արտահայտու՞մ էին 1920 թ. իշխող աշխարհաքաղաքական իրողությունները, թե՞, ինչպես հաճախ է ակնարկվում արևմտյան ու նաև նախկին խորհրդային պատմագրության մեջ՝ այդ պայմանագիրը դիվանագիտական անհիմն ռոմանտիզմի մեռելածին արգասիք էր ու հե՛նց այդ պատճառով էլ չկենսագործվեց:

Ինչպես ստորև ներկայացնելու ենք, Սևրի պայմանագիրն իրականում կոչված էր լուծելու միջազգային քաղաքականության, մասնավորապես, մերձավորարևելյան ու եվրոպական քաղաքականության համար խոշոր նշանակություն ունեցող մի շարք խնդիրներ, որոնց վիժեցումն ու սառեցումը, սարսափելի ծանր հետևանքներ ունեցավ Առաջին համաշխարհային պատերազմից հետո ձևավորվող միջազգային քաղաքական նոր համակարգի համար ու մինչև այսօր էլ խիստ բացասականորեն է ազդում տարածաշրջանային ու միջազգային իրադրության վրա:

Բանն այն է, որ Սևրի դաշնագրում ամրագրված դրույթների իրագործմամբ կարգավորվելու էին երեք կարևոր խնդիրներ, որոնք այսօր էլ մնում են չլուծված.

Ա) Հայկական հարցը,

Բ) Քրդական հարցը,

Գ) մարդկության դեմ զանգվածային ոճրագործությունների միջոցով քաղաքական խնդիրներ լուծելու պրակտիկայի մերժումը և դրանք իրագործած անձանց ու պետություններին անխուսափելի պատժի ենթարկելու հրամայականը:

*Քրդական հարցի մասին*

Թեև այս զեկուցման հիմնական նպատակը Սևրի դաշնագրի՝ Հայկական հարցի հետ ունեցած այժմեական առնչության բացահայտումն է, բայց և այնպես համառոտաբար անդրադառնանք նաև մյուս երկու խնդիրներին:

Սևրի պայմանագրով որոշակի լուծում էր սպասում նաև քրդական հարցին՝ քրդերի անկախ պետականություն ունենալու իրավունքին: Նախատեսվում էր ստեղծել ինքնավար քրդական տարածք, որը հետագայում լիարժեք անկախություն ստանալու մեծ շանսեր ուներ: Տապալելով նաև այս խնդրի լուծումը՝ մեծ տերություններն առաջացրին Մերձավոր Արևելքում դանդաղ գործողության մի ահռելի ական, որը պարբերաբար պայթում է Իրաքում, Թուրքիայում և Իրանում: Մասնավորապես, Թուրքիայում քրդական ապստամբություններ տեղի ունեցան 1925, 1927, 1937, 1984-1999 թթ., 2004-ին վերսկսվեց Քրդական բանվորական կուսակցության պարտիզանական պատերազմը: Քրդական հարցը դեռևս մեծ ու ցավալի խնդիրների առջև է կանգնեցնելու տարածաշրջանային և միջազգային քաղաքականությունը:

*Ֆաշիզմի առաջացմանը նպաստելու, հիտլերյան և ստալինյան ցեղասպանություններին զարկ տալու մասին*

1923 թ. Սևրի հաշտության դաշնագրի փոխարինումը Լոզանի պայմանագրով երկու առումով նպաստեց 1920-1930-ական թթ. ֆաշիզմի առաջացմանը և Եվրոպայի սրտում արդեն զանգվածային բնաջնջումների կիրառմանը:

Նախ, Սևրի տապալմամբ հրապարակավ արդարացվեց ֆաշիզմի պրակտիկան՝ ցեղասպանության ու էթնիկական զտումների միջոցով քաղաքական խնդիրներ լուծելու սովորությունը: Սևրի դաշնագրի վիժեցումը միջազգային քաղաքականության մեջ անբարոյականությունն անպատիժ կերպով կիրառելու մեծագույն քարոզ էր, որը շատ չուշացրեց իր վրեժը լուծել նաև այդ քարոզը կարդացած եվրոպական պետություններից: Ե՛վ Ա. Հիտլերն ու նրա ստահակները, և՛ մեծագույն ոճրագործ Ի. Ստալինը, քաջատեղյակ լինելով հայոց ցեղասպանության մանրամասներին, իրենց համար համապատասխան «դասեր» էին քաղել, որոնք հետագայում բերեցին միլիոնավոր մարդկանց ոչնչացմանը: **1939 թ. Հիտլերի արտասանած հռետորական հայտնի հարցը՝ «ի վերջո, ո՞վ է այսօր հիշում հայերի բնաջնջումը», վերաբերում էր, նախ և առաջ, Սևրի վիժեցմանը և Լոզանով նրա տեղակալմանը:**

Երկրորդ, բոլոր հիմքերը կան պնդելու, որ Սևրի պայմանագրի վիժեցմամբ Եվրոպայի մատույցներում ստեղծվեց առաջին ֆաշիստական պետությունը՝ Թուրքիայի Հանրապետությունը: Վերջինս ուներ ավելի ուշ Իտալիայում, Գեր-

մանիայում և այլուր առաջացած ֆաշիզմի գլխավոր բնորոշ գծերը՝ ամբողջատիրությունը, ծայրահեղ շովինիզմը, ազգային փոքրամասնությունների նկատմամբ դաժան բռնամիջոցների, ընդհուպ մինչև զանգվածային ոչնչացում ու տեղահանում (Թուրքիայում բնաջնջման են ենթարկվել ոչ միայն հայերը, այլև հույներն ու ասորիները, իսկ քրդերի նկատմամբ զանգվածային բռնամիջոցների արդյունքում, օրինակ, 1980-ական թթ. տեղահանվել է ավելի քան 2,000 քրդական գյուղ), քաղաքական մտքի լիակատար վերահսկողությունը, անհատի լիակատար հնազանդությունը պետությանը, առաջնորդի պաշտամունքը (Աթաթուրքի պաշտամունքը մինչև այսօր էլ ուժի մեջ է), հասարակական կյանքի բոլոր ոլորտների ռազմականացումը, ագրեսիան (Թուրքիան դիմել է ագրեսիայի Սիրիայի, Կիպրոսի, Իրաքի դեմ, ագրեսիայի ձև է նաև Հայաստանի նկատմամբ տարվող քաղաքականությունը՝ շրջափակում, դիվանագիտական հարաբերություններից հրաժարում, սպառնալիքներ, Ադրբեջանին պատերազմի մղում, ցեղասպանության ժխտում): Այն, որ խորհրդային և արևմտյան պատմաբաններն ու քաղաքագետները նման գնահատական Թուրքիայի պետական կառուցվածքին չեն տվել, շատ պարզ բացատրություն ունի. ԽՍՀՄ-ում անհնար էր «ֆաշիստ» անվանել Աթաթուրքին, որի հետ Լենինը եղբայրության դաշինք էր կնքել, իսկ արևմուտքում նույն բնութագրումը չէին տալիս, որովհետև Թուրքիան դիտվում էր որպես Ռուսաստանի դեմ պատվար ու առանցքային դաշնակից, ինչը ձևակերպվեց ՆԱՏՕ-ին անդամակցումով:

*Հայկական հարցի ներկա փուլը և Սևրի դաշնագիրը*

Մեզ համար առաջնայինն, այնուամենայնիվ, Սևրի դաշնագիրը Հայկական հարցի տեսանկյունից քննելն ու գնահատելն է: Հետևաբար, նախ, անհրաժեշտ է ճիշտ սահմանել ու ձևակերպել Հայկական հարցի էությունը: Հայկական հարց ասելով՝ այդ տերմինի տակ վաղուց այլևս չպետք է հասկանալ 19-րդ դարի վերջին-20-րդ դարի սկզբին բնութագրվող աշխարհաքաղաքական իրավիճակը և եվրոպական դիվանագիտության վարած համապատասխան քաղաքականությունը, որը հայերի ֆիզիկական անվտանգությունն Օսմանյան կայսրությունում ապահովելու առերես խնդիր էր դնում, այն էլ՝ անիրականանալի բարեփոխումների միջոցով:

**Իրականում, Հայկական հարցի էությունը կայացել է և այժմ կայանում է հայ ժողովրդի՝ իր հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում անկախ և ազատ ապրելու քաղաքական ու տարածքային պայմանների ստեղծման մեջ: Հայկական հարցի լուծումը կարող է լինել միայն մեկը՝ հայոց պետականության վերականգնում եթե ոչ ամբողջ Հայաստանում (350,000 քառ**

**կմ), ապա առնվազն նրա այնպիսի ընդարձակ մի հողատարածքում, որտեղ հնարավոր է հայոց քաղաքակրթության երկարատև անվտանգ գոյությունն ու զարգացումը:**

Այլ կերպ ասած, Հայկական հարցը հայության անվտանգության հարցն է, որը պահանջում է երկու նախադրյալի ապահովում՝ առաջին՝ հայկական լիարժեք և ամուր պետականության ստեղծում, երկրորդ՝ այդ պետականության անվտանգությունն ու կենսունակությունն ամրագրող հողային երաշխիքներ: Ընդ որում՝ մի նախադրյալի ապահովումն առանց մյուսի անիրագործելի է. ո՛չ հայկական պետությունն է ի վիճակի գոյատևել նախկին Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության 29,800 քառ կմ խիստ խոցելի, իր անպաշտպանունակությամբ ինքնըստինքյան «ագրեսիա հրավիրող» սահմաններում, ո՛չ էլ հայկական պետության բացակայությամբ հնարավոր կլինի պահպանել ազգային հավաքական կյանքը ներկայիս հայաբնակ տարածքներում:

Ինչպիսի՞ն է, սակայն, Հայկական հարցի վիճակը ներկայումս:

Հայ ազգի և հայկական քաղաքակրթության գոյությունը վտանգված էր նախկինում, այն վտանգված է և այսօր, որովհետև չլուծված է մնում տարածքային՝ հողային խնդիրը: Հետխորհրդային ժամանակաշրջանում Հայաստանը դարձյալ հայտնվել է «լինե՞լ, թե՞ չլինել»-ի դրության մեջ: Խորհրդային կայսրության փլուզման գործընթացին զուգընթաց հայության դեմ Ադրբեջանի և նրա ավագ դաշնակից Թուրքիայի ծավալած վայրագ գործողությունները, ծավալապաշտական բացահայտ ծրագրերը ևս մեկ անգամ վտանգում են Հայաստանի ֆիզիկական գոյությունը: Վերջին մեկուկես տասնամյակի անկախ գոյության փորձը փաստել է, որ Հայաստանը կարողացել է գոյատևել՝ 42,000 քառ կիլոմետրանոց բնական որոշակի սահմաններ ունեցող տարածքի վրա վերահսկողություն հաստատելու շնորհիվ միայն՝ ներառելով Հայաստանի Հանրապետությունն ու Արցախը՝ ազատագրված տարածքներով հանդերձ: Սա՛ է Հայաստանի անվտանգությունն ապահովող այն նվազագույն հողակտորը, որից պակաս տարածքում հայոց պետականության գոյությունն այլևս կարող է անհնարին լինել:

Աշխարհառազմավարական այս ներկա ետնաբեմի վրա Սևրի դաշնագրի ստորագրումն ու վիժեցումը սոսկ անցած, մեռած պատմություն չեն, այլ քաղաքական, իրավական ու ռազմավարագիտական արժեք ունեցող իրողություն:

*Քաղաքական առումով՝* 1920 թ. Սևրում միջազգային քաղաքականության գլխավոր դերակատարները, համաշխարհային պատերազմի պատճառների

մանրակրկիտ վերլուծության ու հետագայում այդպիսի աղետներից խուսափելու իմաստնությամբ տոգորված, ճիշտ վճիռ կայացրին հայկական հարցով, այն է՝ նոր պատմության մեջ առաջին անգամ ճանաչեցին հայոց պետականության իրավունքները Հայաստանի տարածքի նկատմամբ, ընդսմին առաջարկելով և ուրվագծելով այնպիսի սահմաններ, որոնք թույլ կտային Հայաստանին լինել ռազմականապես պաշտպանունակ ու տնտեսապես կենսունակ պետություն, մի պետություն, որը վստահելի ապաստան կարող էր լինել հայրենիքից բռնությամբ արտաքսված հարյուր հազարավոր հայերի համար: Ու թեպետև պատմական տեսակետից այդ սահմաններն ամբողջովին չէին ընդգրկում հայոց հայրենիքը՝ կազմելով Հայկական լեռնաշխարհի կեսը միայն, բայց և այնպես այդ տարածքի ընդարձակությունը, ռազմավարական խորությունը, բնական հարստություններն ու հաղորդակցային ելքերը, մասնավորապես ծովային ելքը, հնարավորություն էին տալիս արմատապես լուծելու Հայկական հարցը: **Սևրի դաշնագիրն առաջարկել է Հայկական հարցի նախադեպային քաղաքական լուծումը, որն այսօր էլ բոլորովին թարմ է ու չի կորցրել իր նշանակությունը:**

*Իրավական տեսանկյունից*՝ մենք պետք է նկատի ունենանք մի չափազանց կարևոր հանգամանք. այսօրվա դրությամբ Հայկական հարցն իրավական լուծում այդպես էլ չի ստացել. այն չի լուծվել ո՛չ Մոսկվայի, ո՛չ Կարսի, ո՛չ ԽՍՀՄ փլուզումից հետո ստորագրված որևէ պայմանագրի միջոցով, որ փաստվում է ներկայիս վիճակով: Այդ բազմաթիվ պայմանագրերից որևէ մեկը լիարժեք չի գործում և չի էլ կարող գործել, քանի դեռ Հայկական հարցը, այսինքն՝ Հայաստանի սահմանների և, ըստ այդմ, կենսունակության երաշխիքների խնդիրը չի լուծվել: Իսկ Հայկական հարցի բուն էությունը, ինչպես արդեն ասվեց, չի ընդունում այլ լուծումներ, բացի տարածքային-հողային լուծումից: Եվ սա՝ անկախ որևէ մեկի ցանկությունից, զուտ աշխարհառազմավարական իրողությունների բերումով:

Խորհրդային Միության փլուզմամբ Հայկական հարցը «սառցազերծվեց» ու մտավ վայրիվերո զարգացման փուլի մեջ: Հայկական հարցի փոխակերպումներն ցայտուն կերպով արտահայտվեցին ու շարունակում են արտահայտվել հետևյալ չորս ուղղություններով.

ա) Արցախի հիմնահարցում,

բ) որևէ առումով պակաս կարևորություն չունեցող՝ վերջերս էլ տեսանելիորեն սրված Ջավախքի հիմնահարցում,

գ) հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումներում, ժխտումներում ու շահարկումներում,

դ) հայ-թուրքական հարաբերություններում, ներառյալ Հայաստանի ցամաքային շրջափակման հարցում:

Արդարև, 1988 թ. Հայկական հարցը մի վիճակի մեջ էր, 1991-ին մեկ այլ, 1994 թ. մեկ ուրիշ, այժմ՝ զգալիորեն տարբեր:

Հայկական հարցի հետագա զարգացումն անխուսափելիորեն բերելու է նոր պայմանագրերի ստորագրման, ըստ ամենայնի, ոչ միայն Արցախի ու ազատագրված տարածքների կտրվածքով, այլ վերոհիշյալ բոլոր չորս ուղղություններով: Հողային հարցում այդ նոր պայմանագրերը կա՛մ պահպանելու են այսօրվա *ստատուս-քվոն*, կա՛մ լինելու են ավելի նպաստավոր Հայաստանի համար: Պակաս նպաստավոր լինելու պարագայում՝ Հայկական հարցի ռազմավարական վերը նշված բնությունն ինքն է վիժեցնելու դրանց կենսագործումը, վաղ թե ուշ տարածաշրջանում առաջացնելով նոր սրումներ, բախումներ ու պատերազմներ: **Քանի դեռ հայ ժողովուրդը իր անկախ գոյությունն ապահովելու համար անվտանգության բավարար երաշխիքներ չի ստացել, տարածաշրջանում տարածքային հարցեր շոշափող որևէ պայմանագիր չի կարող իրավական հարատևություն ունենալ:** Սա ուռա-հայրենասիրական լոզունգ չէ, որովհետև նման պայմանագրի խախտողը ոչ անպայմանորեն հայկական կողմը կլինի. Հայաստանի սահմանների ծայրահեղ խոցելիությունն ու պաշտպանական խորության բացակայությունը մշտապես գայթակղելու է ադրբեջանա-թուրքական դաշինքին՝ հարմար պահ գտնելու և ռազմական ուղիով մեկընդմիշտ «լուծելու» Հայկական հարցը՝ Հայաստանը լիկվիդացնելով:

Եթե մենք այս՝ այլընտրանք չունեցող ռազմավարական պարզ իրականությունը ժամանակին չնշմարենք և ազգովին չհակառակվենք հողային հարցերում այսօրվա դիրքերից նահանջ նախատեսող ինչ-ինչ աննպաստ պայմանագրերին, ապա դրանք կարող են բերել մեզ ողբերգական վախճանի:

Այսպիսի հեղհեղուկ ռազմավարական ու իրավական համատեքստում, երբ Հայկական հարցը շոշափող ու նախկինում կնքված որևէ պայմանագիր լիարժեքորեն չի գործում, և մոտ կամ հեռու ապագայում սպասվում է նոր պայմանագրերի ու դաշինքների ստորագրում՝ **Սևրի դաշնագիրը, թեև այն երբևէ ուժի մեջ չի մտել, ձեռք է բերում գրեթե նույնպիսի իրավական կշիռ ու արժեք, ինչպիսիք ունեն Հայկական հարցի վերաբերյալ նախկինում կնքված ու վավերացված պայմանագրերը:**

Թեև Սևրի դրույթները չեն իրագործվել, սակայն Հայկական հարցի առումով այն առաջարկել է **ամենաճիշտ իրավական մոտեցումը՝ հողային համալիր լուծում:** Հետևաբար, ապագայում կնքվելիք որևէ համապարփակ

պայմանագրի քննարկման ժամանակ Սևրի դաշնագիրը գործնական նշանակություն է ունենալու որպես Հայկական հարցի լուծմանը միակ ճիշտ մոտեցում ցուցաբերած միջազգային իրավական փաստաթուղթ: Սևրի դաշնագրի նախադեպն այսպես կամ այնպես ընդլայնելու է հայկական կողմի բանակցային պահանջների միջազգային ընդունելիության շառավիղը:

Ասվածը բնավ չի նշանակում, թե հայկական դիվանագիտությունն այսօր պետք է պահանջի Սևրի դաշնագրի կետերի ամբողջական իրականացում, բայց չի կարելի ընկնել նաև մյուս ծայրահեղության մեջ և ուղղակի անտեսել այդ պայմանագիրը, որը Հայկական հարցի համապարփակ կարգավորմանը հայեցակարգային, տեսական, մեկնաբանական ու մեթոդաբանական մեծ տալիք ունի:

Վերջապես, Սևրի դաշնագրի ստորագրման ու չիրագործման պատմությունը մեծ արժեք ունի *ռազմավարագիտական առումով*՝ հայ քաղաքական մտքի զարգացման ու մեր երիտասարդ դիվանագիտության համար, որոնք, ցավոք, դեռևս խարխափում են ազգային անվտանգության շահերի հետապնդման ու նույնիսկ նրանց ճշտորոշման հարցերում: Այս առումով Սևրի պատմությունը հենք է հետևյալ հարցերը ճշտելու համար.

- Սևրի վիժեցումը խոշոր տերությունների դիվանագիտական մտքի կարճատեսության ու սխալականության դրսևորումն է, նրանց կողմից խոշորագույն զարգացումները կանխատեսելու և դրանք կանխելու լիմիտների վառ վկայությունը: Մեծ տերություններն ի վիճակի չեն լինում կանխատեսել իրենց իսկ շահերը վտանգող միջազգային խոշոր զարգացումները, նրանք ի վիճակի չեն ապահովելու իրենց իսկ խոստումների կատարումը:
- Սևրի վիժեցումը հերթական հիշեցում է մեզ առ այն, որ խոշոր տերությունների՝ փոքր ժողովուրդներին, ներառյալ իրենց իսկ դաշնակիցներին, տված խոստումներն ու անվտանգության երաշխիքները կարող են անվարան և հեշտությամբ դրժվել:
- Հետևաբար՝ մենք իրնքներս պետք է վերլուծենք, հասկանանք ու որոշենք մեր անվտանգության խնդիրները, հիշենք, որ անվտանգության «միջազգային երաշխիքները» պատրանք են ու կառուցենք մեր անվտանգությունը հողի վրա՝ հայկական հողի վրա: **Որովհետև, ինչպես Սևրի պայմանագիրը ժամանակին ճանաչել էր, Հայկական հարցի լուծման մեջ անվտանգության ամենամեծ երաշխիքը հողն ու տարածքն են:**

Այսպիսով, բացարձակ սխալ է արևմտյան ու նախկին խորհրդային պատմագրության այն տեսակետը, ըստ որի՝ Սևրի պայմանագրի վիժեցումը արտահայտում էր 1920-ական թթ. սկզբին իշխող աշխարհաքաղաքական իրողությունները: Ամենևին: Սևրի վիժեցմամբ միջազգային քաղաքական համակարգի (ներառյալ Խորհրդային Միության և այդ դաշնագիրն ստորագրած եվրոպական տերությունների) երկարաժամկետ և անգամ կարճաժամկետ շահերը զոհաբերվեցին հանուն այսրոպեական քաղաքականության չարդարացված նպատակների: 1923 թ. Լոզանում Սևրի պայմանագրի կատարյալ տապալումը մինչև օրս էլ շարունակում է խիստ բացասական դեր կատարել տարածաշրջանային ու միջազգային քաղաքականության մեջ:

Ասվածից հրամայականորեն հետևում է, որ Հայաստանի դիվանագիտությունն այսօրվանից իսկ պետք է ունենա այնպիսի մշակումներ, որոնք, համապատասխանելով հանդերձ արդի աշխարհաքաղաքական պայմաններին, թույլ կտան առավելագույնս օգտագործել Սևրի դաշնագրում Հայկական հարցի մասով ամրագրված մոտեցումներն ու լուծումները: Եթե ապագայում մեր դեռևս հեղհեղուկ ու չկայունացած տարածաշրջանում կնքվելու է գոնե հարաբերական հարատևությանը հավակնող որևէ համապարփակ պայմանագիր, ապա Սևրի դաշնագրի մեջ տեղ գտած ռազմավարական մոտեցումներն ու լուծումներն, մեծ կամ նվազ չափով, դեռ կատարելու են այն դերը, որ չկատարեցին 1920-ական թվականներին:

*Արմեն Այվազյան,*
*քաղաքական գիտությունների դոկտոր*